



Ա Ե Ր Ե Յ Է՝ Ք



ՊԵՆՏԷՐ: — Սէրը հոգւոյն թէն է առ Աստուած, առ Մեծն, առ Գեղեցիկն, առ Վսեմն՝ որ Աստուծոյ ստուերներն են երկրիս վրայ: Սիրեցէ՛ք ընտանիքը, ձեր կենաց ընկերը. այն մարդիկը՝ որոնք պատահաւորաւ են ձեր ցաւերուն և ուրախութեանց մասնակցելու. այն ննջեցեալները՝ որոնք ձեզի սիրելի եղած են և որոնց զուց սիրելի էիք: Բայց ձեր սէրն ըլլայ այնպէս՝ ինչպէս որ Տանդէ և մենք սովորեցուցինք. սէրը՝ այն ոգիներուն՝ որ միասին կը վերաթեւեն և չեն կորսեր երկիրը, խնդրելով խաղաղութիւն մը՝ որ երկրի վրայ տրուած չէ արարածին և զոր հիասթափումն անխուսափելի կերպով անձնասիրութեան մէջ կ'ընկղմէ: Սիրել, է՝ խոստանալ և խոստում ընդունիլ ապագային համար: Աստուած սէրը տուած է մեզի՝ իբրև երկնցի նշանակ մը, որպէս զի վաստակարեկ հոգին ունենայ բան մը՝ որուն առջեւ և ուրիշներուն ալ նեցուկ ընէ կենաց ճանապարհին մէջ. պարտքի ճանապարհին վրայ ծնած ծաղիկ մ'է՝ որ չփոխեր պարտքը: Սրբացէ՛ք, լաւագոյն եղի՛ք՝ սիրելով: Այնպէս ըրէ՛ք՝ որ նոյն իսկ ձեր երկրաւոր ցաւերն ա՛նձեցնելու պայմանաւ՝ ըլլալ հոգին երբեք հոս կամ այլուր չամշտալ ձեր վրայ կամ ձեզ համար: Ժամանակ պիտի գայ, որ նոր կենաց բարձրութենէն ընդգրկելով անցեալն՝ ու անոր գաղտնիքն ըմբռնելով՝ պիտի ժպտիք այն ցաւերուն և այն նե-

ղութեանց վրայ՝ որոնցմով տառապեցաք: Սիրեցէ՛ք իտալիան: իտալիա այն երկիրն է, ուր կը ննջեն ձեր ծնողքը, ուր կը խօսուի այն լեզուն, ուր ձեր սրտակիցը ձեզ կը մրմնջէր առաջին խանդակաթ խօսքը. այն տունն է՝ զոր տուեր է Աստուած ձեզի, որպէս զի հոն գործելով և կատարելութեան դիմելով, պատահաւորաւ որոնք առ ինքն բարձրանալու. նա՛ ժողովուրդներուն մէջ՝ ձեր անունն է, ձեր փառքը, ձեր նշանը, իրեն համար տուէ՛ք ձեր մտածումը, ձեր խորհուրդը, ձեր արինքը: Զայն այնչափ գեղեցիկ և մեծ ըրէ՛ք, որչափ մեր նախնիքը կը նախազգային: Բայց, ոչ զրէ՛ք, մի՛ թողուք սրտութեան հետք մը և ոչ ստրկութեան հետք մը որ զայն ապականէ. ուշադրութիւն դրէ՛ք զայն չաղծելու՝ անմիաբանութեամբ: Թող անիկայ մէկ ըլլայ, ինչպէս է Աստուծոյ մտածումը: Գուց քսան և չորս միլիոն ժողովուրդ էք, օծուած՝ զործունեայ, փայլուն ծիրքերով. ունիք փառքերու աւանդութիւն մը, որուն վրայ կը նախանձին Եւրոպական ազգերը. ձեր առջև անհուն ապագայ մը կայ, ձեր աչքերը կը սեւեռին ամենէն գեղեցիկ երկնքին վրայ՝ զոր Եւրոպա կը ճանչնայ, և ձեր շուրջը կը ժպտի ամենէն գեղեցիկ բնութիւնը՝ որուն վրայ Եւրոպա կը զարմանայ, և ձեզ կը շրջապատեն Ալպեան ներն ու ծովը, սահմաններ՝ զոր Աստուծոյ մատը գծեց հսկաներու ժողովուրդի մը

համար: Իւ դուք պէտք էք կամ հսկայ ըլլալ կամ բնաւ գոյութիւն չունենալ. ո՛չ մէկ մարդ այդ քսան և չորս միլիոնէն՝ դուրս կը մնայ եղբայրական միութենէն. ո՛չ մէկ նայուածք որ ազատի մը չըլլայ՝ պէտք է բարձրանայ դիտելու այդ երկիրներէ: Թո՛ղ Հոովմը ձեր փրկանքի սրբազան տապանակ ուխտին ըլլայ, ձեր ազգին տաճարը. ո՛չ ապաքէն երկիցս երուսաղէմի ճակատագրին տաճարն եղաւ: Երկու շիջեկափառ աշխարհներ, հեթանոսական աշխարհը և քրիստոնէական աշխարհը՝ իրարու վրայ կը բարձրանան: Ինչպէս գոհարներ՝ պսակի մը մէջ. անոնցմէ հանեցէք աւելի ընդարձակ երբորդ աշխարհ մը:

Սիրեցէ՛ք մարդկութիւնը: Գուք ձեր առաքելութիւնը կարող չէք իմանալ՝ բայց եթէ այն իմացականութեամբ՝ զոր Աստուած մարդկութեան առաջնորդ դրած է: Աստուած, հայրենիքը՝ ձեզի իբրև խանձարուք տուած է, մարդկութիւնը՝ իբրև մայր, և դուք ձեր խանձարուքի եղբայրները չէք կրնար սիրել՝ եթէ հասարակաց հայրենիքը չսիրէք: Ալպաններէն անդին, Ժովէն անդին ուրիշ ժողովուրդներ կան, որ կը պատերազմին և կը պատրաստուին պատերազմելու ձեզի պէս՝ անկասկածեալ, ազգութեան, ազատութեան սրբազան դիտումներով: Ուրիշ ժողովուրդներ՝ որ ուրիշ ճամբաներով կը ձկտին նոյն նպատակին, այն է կատարելագործում, միաբանութիւն, հիմնարկումն հեղինակութեան մը՝ որ վերջ դնէ բարոյական անիշխանականութեան, որ հանգուցէ երկիրն ու երկիրը. հեղինակութիւն մը՝ զոր մարդիկ կարենան սիրել և հետեիլ անոր՝ առանց խղճի և առանց շառագունանքի: Կապուեցէ՛ք անոնց հետ, ինչպէս անոնց ձեզի պիտի կապուին: Ձանոնք մի՛ կանչէք երբ ձեր բազուկը միշտակ կարող է յաղթել. բայց Ըսէ՛ք իրենց թէ հիմա պիտի հնչէ ժամն ահաւոր ընդհարումի մը՝ իրաւունքի և զօրութեան մէջ. և թէ դուք այդ պահուն պիտի ըլլաք անոնց հետ՝ որ ձեր դրօշակը պիտի բարձրացնեն:

Իւ սիրեցէ՛ք, յարգելով, ո՛վ երիտասարդներ, Գաղափարը: Գաղափարներն Աստուծոյ խօսքն են: Աւելի վեր քան բոլոր հայրենիքները՝ կայ իմացականութեան հայրենիքը, մտքի քաղաքը. անոր մէջ եղբայր են անոնք՝ որ կը հաւատան միաժողովի անբռնաբարեիշխութեան, մեր անմահ հոգւոյն արժանապատուութեան, և այդ եղբայրակցութեան մկրտութեան աւագանքը՝ մարտիրոսութիւնն է: Այդ բարձր միջնորդութիւն մէջ կը շարժին սկզբունքները՝ որոնք ժողովուրդները կը փրկանաւորեն: Գործեցէ՛ք անոնց համար և ո՛չ եթէ վիշտերու համբոխով չկարենալնուդ և կամ չարիքներէ վախնալնուդ համար: Բարկութիւնը, հպարտութիւնը, փառասիրութիւնը, նիւթական երջանկութեան փափաքը, ժողովուրդներու և ժողովուրդներ ճնշողներու հասարակաց գէնքն են, և եթէ անոնցմով այսօր յաղթէք, վաղը պիտի ինչոք վերստին. բայց սկզբունքները՝ միայն ժողովուրդներու կը վերաբերին, և ճնշողները՝ դիմադրելու գէնք չեն գտներ:

Երկրպագեցէ՛ք խանդավառութեան: Երկրպագեցէ՛ք կոյս հոգւոյ երազներուն և նախկին երիտասարդութեան տեսիլներուն, վասն զի երիտասարդութեան երազներն արքայութեան բոյր մ'են զոր հոգին կը պահէ իր Արարչին ձեռքերէն ելած պահուն: Այժմ քանի առաջ յարգեցէ՛ք ձեր խղճմտանքը. շրթունքի վրայ ունեցէ՛ք ճշմարտութիւնը՝ զոր Աստուած ձեր սրտին մէջ դրաւ. և գործելով միասին, ամէն բանի մէջ՝ որ մեր երկրի ազատութեան կը ձկտի, անոնց հետ՝ որ ձեզմէ տարբեր զգացում ունին, միշտ վեր բռնեցէ՛ք ձեր դրօշակը, և յանդուգն կերպով ձեր հաւատքը տարածեցէ՛ք:

ՄԱՍԽԵՐԻՒ՝

Թրգմ. Հ. Ա. ՅՈՎԱԿԻՄՅԱՆ

1. Երեմի. — Իննսուսաներորդ դարու Իսաւելոյ մեծագոյն հանճարներէ մին. Յն. Ճնճմարի մէջ է Ձմ յունիսի 1808: